«ՄԱՇՏՈՑԵՑ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

www.mashtoz.org

Ð³Ù³ó³Ýó³ÛÇÝ ·ñ³ï³ñ³ÝÁ 5 ï³ñ»Ï³Ý ¿



Սիրելի Հայրենակից,

սրտի մեծ ուրախութեամբ եւ հոգեւոր բերկրանքով ահա ամբողջացնում ենք մեր համացանցային ծառայութեան Հինգերորդ Տարին եւ մտնում ենք մի Նոր Շրջան, մի Նոր Հանդրուան:

Հաւատքի մղումով փառաբանութիւն ենք բարձրացնում առ Աստուած, որ իր չնորհներով հնարաւոր դարձրեց մեր աշխատանքը ի նպաստ Հայ Ընտանիքի եւ Հայ Անհատի հոգե-մտաւոր կեանքի: Թէեւ մեր բերած այս նպաստը յոյժ համեստ է, այնու հանդերձ մեր սիրտը լիացնում է ցնծութեամբ ու բերկրանքով, որ ծնւում է Աստծոյ եւ իր ժողովրդի համար աշխատած լինելու գիտակցութիւնից:

Իսկոյն ասեմ, որ այս Հնգամեայ Յոբելեանի առթիւ պատրաստել ենք մի նուէր Ձեզ բոլորիդ, մեր կայքի մշտական այցելուներին. հոգեւոր մի ճայնասկաւառակ աշխարհահռչակ տաբբեր երգահանների կողմից գրուած 14 «Աւէ Մարիա»ներով: Յիրաւի, Աստուածածնի մայրական հովանու ներքոյ ենք ապրում եւ գործում, եւ այս Հնգամեայ Յոբելեանն էլ որդիական մեծարանքով ձօնում ենք Նրան: Լսելու կամ ձեր համակարգչի վրայ պատճէնագրելու համար այդ 14 չարականները, այցելէք մեր կայքի «Գրադարան» բաժնի «Ձայնագրութիւններ» ենթաբաժինը: Մաղթում ենք հոգու եւ մտքի գեղեցիկ պահեր:

Հինգ տարի միասին անցկացրինք. մենք եւ Դուք: Մենք կամեցանք միայն օգտակար լինել Ձեզ եւ Դուք եղաք ու մնում էք մեր ուշադրութեան կենտրոնում: Մենք միշտ ուրախացանք այն բոլոր անգամների համար, որ այցելեցիք մեզ. այս տարիների ընթացքում մեր գրադարանի "դուռը" Ձեր առաջ բացուել է աւելի քան 105.209 անգամ, Ձեզ հետաքրքրող նիւթերը փնտռելով՝ մեր գրադարանի էջերը "թերթատել էք" աւելի քան 246.684 անգամ, եւ մեր գրքերը Ձեզ տրամադրել ենք աւելի քան 531.315 անգամ:

Այս արդիւնքը գոհացնում է մեզ, բայց այլեւս անցեալ է: Մեր հայեացքներն ուղղուած են դէպի ապագան: Մեր կամքն ու բաղձանքները կողմնորոշուած են դէպի նորանոր գրքերի հրատարակումը: Մինչեւ այսօր, ամենաբազմազան դժուարութիւնների միջով անցնելով, կարողացանք հրատարակել աւելի քան 1.600 էջ գրականութիւն (A4 չափի էջերով): Սրտանց չնորհակալութիւն ենք յայտնում այն անձանց, որոնք հոգեպէս եւ նիւթապէս թիկունք կանգնեցին այս ծառայութեանը, եւ նրանց եւ նրանց սիրելիների համար հայցում ենք Աստծոյ գերառատ օրհնութիւնները:

Մեր ապագայ ծրագրերում չարունակելու ենք եկեղեցական, հոգեւոր ու դաստիարակչական գրքերի թարգմանումը եւ տրամադրումը Հայ Ընտանիքներին, ինչպէս միշտ՝ անվճար: Ուժգին չեշտ ենք դնելու, ի մասնաւորի, ընտանեկան կեանքին վերաբերուող եւ պատանիներին յուզող հարցերի վրայ, քանի որ Ընտանիքն է մարդկային հասարակութեան, եւ հետեւաբար՝ նաեւ մեր Ազգային գոյութեան կորիզը:

Գոյատեւելու եւ աւելին անել կարողանալու համար, սակայն, այս ծառայութիւնը կարիքն ունի նաեւ Ձեզնից իւրաքանչիւրի աջակցութեանը, քանի որ միայն մեր կարողութիւնները խիստ սահմանափակ են այսպիսի ծաւալուն գործի համեմատ: Եթէ կը կամենաք վեհանձնօրէն մասնակցել այս ծառայութեանը, ահա սրանք են մեր հաշուեհամարները.

Դրամատուն	ARDSHININVESTBANK, Yerevan, Armenia
SWIFT	ASHBAM22
ՀՀ Դրամով	247230777770
Եւրոյով	247230777770 / 0049
ԱՄՆ Դոլարով	247230777770 / 0001
Հաշուետէր	KAZARIAN VAGE

Ճիշտ է, մեծ մեկենասութիւնները կարեւոր են, բայց փոքրիկ նուիրատուութիւններն անգամ արժէքաւոր են գործը յառաջ տանելու համար: Նման են կաթիլների, որոնք կուտակուելով՝ կարող են լցնել գաւաթը: Եւ կարող են ծնունդ տալ մեծ գրքերի, որոնք եղել են եւ մնում են մարդկային էակի հոգեւոր սնունդը:

Կրկին մաղթելով, որ մեր ծառայութիւնը ինչ որ կերպ օգտակար լինի Ձեզ եւ Ձեր մերձաւորներին, յուսով ենք դեռ բազում անգամներ "Հանդիպել" Ձեզ «Ծառայել Քրիստոնեայ Հայաստանին» համացանցային Գրադարանում, ինչպէս միշտ՝ www.mashtoz.org հասցէով:

Լաւագոյն մաղթանքներով,

Ø³ßïáó ì³Ñ¿ Ô³½³ñ»³Ý